ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«4» օգոստոսի 2022 թ. № 812-Լ

# ՀՐԱՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N696-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման N1 հավելվածի 49-րդ կետը և N2 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների և դրանց ծրագրային ապահովման համապատասխանության եզրակացության տրամադրման ընթացակարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Նոր ձեռք բերված կամ վարձակալած հսկիչ դրամարկղային մեքենաների գրանցման ընթացակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների և դրանց ծրագրային ապահովման համապատասխանության եզրակացության տրամադրման և նոր ձեռք բերված կամ վարձակալած հսկիչ դրամարկղային մեքենաների գրանցման ընթացակարգը հաստատելու մասին» N696-Լ հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8/4/2022

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ ՊԵԿ նախագահի 2022 թվականի
օգոստոսի 4-ի N 312-Լ հրամանի

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Հսկիչ դրամարկղային մեքենայի (այսուհետ ՀԴՄ)՝ սույն ընթացակարգի N 2 ձևին համապատասխան եզրակացություն (այսուհետ՝ համապատասխանության եզրակացություն) ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ) է ներկայացվում սույն ընթացակարգին կից N 1 օրինակելի ձևին համապատասխան դիմում (այսուհետ՝ Դիմում), N 1 օրինակելի ձևով սահմանվող կից փաստաթղթեր, և ՀԴՄ սարքի յուրաքանչյուր մոդելի համար 2 փորձանմուշ առձեռն ներկայացվում է ՊԵԿ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն:

2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված դրույթներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների և դրանց ծրագրային ապահովման համապատասխանության ստուգումը և փորձարկումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանով հաստատված աշխատանքային խումբը:

3. Աշխատանքային խմբի աշխատանքներին անհրաժեշտության դեպքում կարող է մասնակցել փորձագետ՝ սարքի տեխնիկական բնութագրերի փորձագիտական մասնագիտական գնահատական տալու նպատակով, ինչպես նաև ՀԴՄ սարքը ներկայացնող անձը:

4. Դիմումով ներկայացված փաստաթղթերի ամբողջական լինելու դեպքում Դիմումին ընթացք է տրվում, և աշխատանքային խմբի ղեկավարի կողմից աշխատանքային խմբին Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ներկայացվում է դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը: ՀԴՄ սարքի փորձանմուշները ներկայացվում են առձեռն:

5. Դիմումի կամ դիմումով ներկայացված փաստաթղթերի թերի լինելու դեպքում, դիմումատուից պահանջվում է ներկայացնել թերի կամ բացակայող փաստաթղթերը՝ Դիմումի ընթացքն ապահովելու նպատակով:

6. Աշխատանքային խումբը սույն ընթացակարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է հետևյալ գործողությունները.

1) ՀԴՄ սարքի մոդել(ներ)ի և կապի միջոցների փորձարկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում,

2) ծրագրային ապահովման նկարագրի՝ տեխնիկական առաջադրանքի փորձաքննություն,

3) Օրենսգրքի և Որոշումով հաստատված գործառույթների իրականացման ծրագրային ապահովման ստուգում, այդ թվում՝

ա) ՀԴՄ սարքի ենթածրագրի աշխատանքի ստուգում,

բ) ՀԴՄ սարքի միջոցով իրականացված գործարքների մասին հարկային մարմնի տեղեկատվական բազա տեղեկատվության փոխանցման ստուգում,

գ) արտաքին (առևտրային) ծրագրերին ինտեգրման հնարավորության ստուգում:

7. Սույն ընթացակարգի 6-րդ կետում նշված գործողությունների իրականացման ավարտից հետո աշխատանքային խումբը 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ներկայացված ՀԴՄ սարքի փորձանմուշի վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ արձանագրություն): Արձանագրության մեջ նշվում են ՀԴՄ սարքի մոդել(ներ)ի՝ Օրենսգրքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանության կամ անհապատասխանության հիմքերը:

8. Արձանագրությամբ ՀԴՄ սարքի մոդել(ներ)ի՝ Օրենսգրքով և Որոշմամբ սահմանված պահանջներին (բացառությամբ անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջների) համապատասխանության դեպքում տրվում է սույն ընթացակարգի N 3 ձևին համապատասխան՝ համապատասխանության նախնական եզրակացություն: Եթե ՀԴՄ սարքի մոդել(ներ)ը համապատասխանում են նաև անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջներին, ապա տրվում է համապատասխանության եզրակացություն: Սույն կետում նշված եզրակացությունները տրամադրվում են կամ դիմումը մերժվում է

աշխատանքային խմբի բոլոր անդամների կողմից արձանագրության ստորագրման դեպքում: Ընդ որում, որևէ տեսակի եզրակացությունը ընդունված է համարվում, եթե դրա օգտին դրական կարծիք է տրվել աշխատանքային խմբի 70 տոկոս և ավելի անդամների կողմից:

9. Արձանագրությունը կազմելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում դրա հիման վրա աշխատանքային խմբի ղեկավարի կողմից պատասխանվում է դիմումատուին:

10. ՀԴՄ սարքի մոդել(ներ)ի՝ Օրենսգրքով և Որոշմամբ սահմանված պահանջներին անհամապատասխանության վերաբերյալ արձանագրության դեպքում ներկայացված դիմումը մերժվում է, և աշխատանքային խմբի ղեկավարի կողմից այդ մասին կազմված արձանագրության հիման վրա 1 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանվում է դիմումատուին, իսկ փորձանմուշներից մեկը առձեռն վերադարձվում է դիմումատուին: Երկրորդ փորձանմուշը պահվում է ՊԵԿ-ում:

11. Հսկիչ դրամարկղային մեքենայի փորձանմուշ(ներ)ը ի պահ են տրվում ՊԵԿ-ին՝ 7 տարի ժամկետով:

12. Աշխատանքային խմբի կողմից արձանագրության կազմման օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին անվճար տրամադրվում է սույն ընթացակարգի 8-րդ կետին համապատասխան եզրակացություն:

13. Համապատասխանության նախնական եզրակացություն ստացած ՀԴՄ սարքի մոդել(ներ)ը ենթակա չեն իրացման կամ վարձակալության տրամադրման, քանի դեռ դրանք չեն ապահովում անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջները:

14. Այն դեպքում, երբ համապատասխանության նախնական եզրակացություն ստացած ՀԴՄ սարքի մոդել(ներ)ը կապահովեն անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջները, այդ մասին դիմումատուն անկանխիկ վճարման ապահովման վերաբերյալ հավաստում է ներկայացնում ՊԵԿ: Դիմումատուի կողմից ներկայացված փորձանմուշ(ներ)ի համար իրականացվում է համապատասխան ծրագրային թարմացում՝ անկանխիկ գործառնության մասով: Ծրագրային թարմացման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային խումբն իրականացնում է Որոշման N 1 հավելվածով սահմանված՝ անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջներին համապատասխանության ստուգում:

15. Անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջներին համապատասխանության դեպքում տրվում է համապատասխանության եզրակացություն, որից հետո ՀԴՄ սարքի մոդել(ներ)ը կարող են իրացվել կամ տրամադրվել վարձակալության:

16. Համապատասխանության եզրակացության տրման դեպքում յուրաքանչյուր մոդելի համար ներկայացված 2 փորձանմուշները պահվում են ՊԵԿ-ում:

17. Իրացնելուց (վարձակալության տալուց) հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխանության եզրակացություն ստացած ՀԴՄ-ներ իրացնող հարկ վճարողից էլեկտրոնային եղանակով xls կամ xlsx ֆորմատով պահանջվում է ՊԵԿ Հարկ վճարողների սպասարկման վարչություն ներկայացնել ՀԴՄ-ի գնորդ հանդիսացած (վարձակալած) տնտեսվարողի և նրա կողմից ձեռք բերված ՀԴՄ-ների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ ՀՎՀՀ-ն, ՀԴՄ-ների գործարանային համարները, մոդելները և ՀԴՄ-ի արտադրության տարեթիվը:

***Օրինակելի ձև N 1***

| ԴԻՄՈՒՄ<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ | |
|---|---|
| ՀՎՀՀ | |
| Հարկ վճարողի անվանումը | |
| Հարկ վճարողի գտնվելու վայրը | |
| Գործունեության հասցե | |
| Հեռախոսահամար | |
| Էլ հասցե | |
| Ներկայացվող մոդել | |
| Գործարանային համար | |
| Կից ներկայացվող փաստաթղթեր | |

Դիմումի հետ մեկտեղ տրամադրում եմ՝

- _____մոդելի տեխնիկական անձնագիրը
- _____մոդելի՝ արտադրողի թույլտվությունը (MAF)
- _____մոդելի ծրագրային ապահովման նկարագիրը՝ տեխնիկական առաջադրանքը
- Այլ նյութեր_____

_____մոդելի 2 փորձանմուշներն առձեռն ներկայացվել են ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն

***Պարտավորվում եմ*** ապահովել ամբողջ խմբաքանակի համապատասխանությունը ներկայացված փորձանմուշին, իսկ անհամապատասխանության դեպքում ***տեղեկացված եմ***, որ կրելու եմ պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ (ԳՈՐԾԱԴԻՐ
ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ) ԿԱՄ ՆՐԱՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ՝ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

___ _____ 20___ թ.

# ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N___

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

___ _____ 20___թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի _____ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի __ _____ . 20__թ. N _____ արձանագրությունը _____ի (ՀՎՀՀ_____) կողմից ներկայացված հսկիչ դրամարկղային մեքենայի (մոդել_____) տեխնիկական պահանջների, ցանցային կապի միջոցների տեխնիկական պահանջների և սարքի ծրագրային ապահովման վերաբերյալ տրամադրում է համապատասխանության եզրակացությունը:

_____ (ՀՎՀՀ_____) երաշխավորում է, որ իր կողմից ներկայացված _____ մոդելի հսկիչ դրամարկղային մեքենաները համապատասխանում են համապատասխանության եզրակացություն ստանալու համար ներկայացված փորձանմուշին: Սույն պայմանը խախտելու դեպքում _____ կրում է պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն եզրակացությունը կազմվել է 2 օրինակից:

| Տրամադրող | Ստացող |
|---|---|
| ՀՀ ՊԵԿ նախագահի____ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի ղեկավար՝ | Հարկ վճարող (գործադիր մարմնի ղեկավար) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձ՝ |
| _____ | _____ |
| (անուն, ազգանուն) | (անուն, ազգանուն) |
| _____ | _____ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

## ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N____

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

___ _____ 20___թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի _____ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի __ _____ . 20__թ. N _____ արձանագրությունը _____ի (ՀՎՀՀ_____) կողմից ներկայացված հսկիչ դրամարկղային մեքենայի (մոդել_____) տեխնիկական պահանջների, ցանցային կապի միջոցների տեխնիկական պահանջների և սարքի ծրագրային ապահովման (բացառությամբ անկանխիկ վճարման տեսակի կիրառման պահանջների) վերաբերյալ տրամադրում է համապատասխանության նախնական եզրակացությունը:

Սույն եզրակացությունը կազմվել է 2 օրինակից:

| Տրամադրող | Ստացող |
|---|---|
| ՀՀ ՊԵԿ նախագահի ____ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի ղեկավար՝ | Հարկ վճարող (գործադիր մարմնի ղեկավար) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձ՝ |
| _____ | _____ |
| (անուն, ազգանուն) | (անուն, ազգանուն) |
| _____ | _____ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Հավելված 2
ՀՀ ՊԵԿ նախագահի 2022 թվականի
օգոստոսի 4-ի N 312-L հրամանի

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ՆՈՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N1976-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ձեռք բերված կամ վարձակալված հսկիչ դրամարկղային մեքենան (այսուհետ՝ ՀԴՄ) գրանցելու համար հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացվում է դիմում:

2. Այն դեպքում, երբ ՀԴՄ-ն ձեռք է բերվում կամ վարձակալվում է առաջին անգամ և երբևիցե հարկային մարմնի տեղեկատվական համակարգում գրանցում չի ստացել, հարկային մարմին ներկայացվում է ՀԴՄ ձեռք բերելու մասին դիմում:

3. Այն դեպքում, երբ ձեռք է բերվում կամ վարձակալվում է արդեն իսկ հարկային մարմնում մեկ անգամ գրանցում ստացած ՀԴՄ, հարկային մարմին է ներկայացվում ՀԴՄ-ն գրանցելու դիմում:

4. ՀԴՄ ձեռք բերելու մասին ներկայացված դիմումները հաստատվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից: Հաստատումից հետո նոր (չշահագործված) ՀԴՄ-ի կիրառումը, այդ թվում՝ կիրառվող ՀԴՄ-ի՝ Որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխանող ՀԴՄ-ով փոխարինումն իրականացվում է Որոշման N 2 հավելվածով սահմանված ընթացակարգով:

5. ՀԴՄ գրանցելու մասին դիմումների ներկայացման դեպքում ՀԴՄ-ի գրանցումն իրականացվում է ավտոմատ: